ԱՖՈՐԻԶՄՆԵՐԸ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ «ՈՒԹՆՅԱԿՆԵՐ» ՇԱՐՔՈՒՄ

Ամեն մի գրող իրեն հատուկ հոգեկերտվածքի դրսևորումներն է արտացոլում իր արվեստում, ստեղծում է գեղագիտական իր համակարգը: Ինքնատիպ արվեստագետ-գրող լինելու նախապայմանը ուրույն ներաշխարհ ունենալն է :

Պ. Սևակի ինքնարտահայտման լավագույն դրսևորումը նրա գրական հարուստ ժառանգությունն է:

Պ. Սևակը գտնում էր, որ իսկական արվեստի երկի հիմնական ատաղձը ոչ թե ձևի կարևորության մեջ է, այլ ասելիքի, և խորագետ գրողը պետք է ստեղծագործության մեջ առաջնային համարի կյանքի արտահայտությունը, իրականը վերարտադրելու և այն որպես արվեստի գործ ներկայացնելու իրողությունը: «Արվեստի զարգացման կեռմանները մտովի անցած մարդը,- գրում է Պարույր Սևակը,- չի կարող ինքն իրեն և ի լուր ամենեցուն չասել, որ վերջին հաշվով կարևորը ոչ թե ինչպեսն է, այլ ինչ-ը»:[1] Ձևի և բովանդակության խնդրում բանաստեղծը ձևի կարևորությունն ընդունում է այնքանով, որքանով այն անհրաժեշտ է գաղափարի արտահայտության համար: Բանաստեղծի առաջադրած պահանջից էր բխում.«... ճշմարիտ բանաստեղծության պաշտպանություն , ընդդեմ փուչ ու ճռճռան, գանգրահեր և ուռուցիկ բառերի ոտանավորչության»[2]: Նրա գեղարվեստական յուրացումների, իրականության և մարդու ներաշխարհի ընդերքային բարդ շերտերի մեջ մերժվում է «ոտանավորչության» գաղափարը: Իրական աշխարհի ձևերի մեջ էր Պարույր Սևակը բանաստեղծություն գտնում: Մերժելով «ֆոլկլորային մտածելակերպը», Սևակը մերժում էր նաև նրա օրակարգային խնդիր լինելու հարցը, միաժամանակ, սակայն, չէր ժխտում, որ յուրաքանչյուր ազգի գրող, կարևորելով բանահյուսության «անկրկնելի հմայքն ու հարստությունը», ինչպես օդից, պիտի օգտվի դրանից, և որպես առաջնային խնդիր նրա համար պիտի մնա «հարաբերականության տեսության աղը ծամած», «քվանթային տեսությունը համտեսած» ընթերցողին գոհացնելը: Դարի, պատմության համաշխարհային քաղաքակրթության հետ համընթաց քայլքի խնդիրն էր առաջ քաշում Պ. Սևակը. «մտնել *ոգու* ոլորտները, շահագործել *հոգու* հարստությունը»:[3]

---

[1] Պ. Սևակ, Վերնագիրը վերջում, Եր.,1991, էջ 18:
[2] Պարույր Սևակ, Երկերի ժող.,հ.5,Եր.,1974, էջ 407:
[3] Պարույր Սևակ, Երկեր, հ-5, 1974, էջ 261: Ընդգծումները՝ տեքստում:

1957-ին լույս տեսավ «Նորից քեզ հետ» բանաստեղծությունների ժողովածուն, որի մի առանձին բաժինն է «Ութնյակներ» շարքը: (1956)

Յուրաքանչյուր բանաստեղծություն ինքնին իսկական արվեստի գործ է, եթե ունի ընթերցողի հուզական աշխարհի վրա ներգործելու ուժ, մարդկային գիտակցական և ենթագիտակցական ոլորտների անանցանելի սահմանը թափանցելու և դեպի ինքը կրկին անգամ վերադարձ ապահովելու գաղտնիքը: Մարդկային բարոյահոգեբանական ըմբռնումներն ու աշխարհայեցությունը մարմնավորելու համար բանաստեղծն ընտրել է պոետիկական այնպիսի միջոցներ, որոնք սեփական էության ու խառնվածքի ծնունդ են. դրանց արտացոլումը նրա գեղարվեստական համակարգում յուրովի ձև է ստանում՝ ներքին հզոր լարվածությամբ, համակողմանի և խոր վերարտադրելու ընդգրկունությամբ, անակնկալ «հայտնություններով», պատկերային ու կառուցվածքային «անակնկալ» լուծումներով:

Ժամանակի առավել ճշմարտացի և առավել խոր դիտարկումները գրողը ներկայացնում է նաև պատկերամտածողության այս ոլորտում: Փիլիսոփայական խորք ունեն «Ութնյակները», անցած ճանապարհից քաղած դասերից մարդը փորձ է ձեռք բերում, իմաստնանում, հասունանում և չարն ու բարին, կյանքի խտրական ու անհիրավ կողմերը տարբերակելիս՝ հանգում ճշմարիտ նկատումների.

Տաքն ի՞նչ իմանա,
Թե պաղն ինչ է:
Վե՛րքը կիմանա,
Թե աղն ինչ է:

Նա՛, ով շատերին
Կսկիծ է տվել,
Ինչպե՞ս իմանա
Թե դաղն ի՞նչ է:[5] /258/

Բանաստեղծի ութնյակները գրվել են կարծես իր իսկ դիմանկարի ամբողջացման համար՝ ըմբռնումների և գործնականում ունեցած վաստակի համատեղության նպատակով: Վերացական և շինծու զգացումներով պոեզիան երբևէ չի ընդունել Պ.Սևակը:

Պ.Սևակը հետազոտական մանրակրկիտ աշխատանք է տանում յուրաքանչյուր ութնյակում, մարդախուզական աշխատանք, որն ինքնանպատակ չէ. զատ-զատ նա «լուսավորում» է մարդկային էության առանձին անկյունները, որոնում դեռևս չբացահայտված խորքեր:

Ժամանակի մարդուն և մարդուն ընդհանրապես, Սևակը դիմակազերծում է հենց նույն ժամանակի առաջ՝ մետաֆորային- հեգնական խոսքի շեշտերով մղելով նրան դեպի ինքնաճանաչման դժվարընթաց ճանապարհը.

---

[5] Պարույր Սեվակ, Երկ. ժող., հ-1, Եր., 1972, էջ 258: Ընդգծումները մերն են՝ Ն. Հ.: Այսուհետ բոլոր բանաստեղծությունները նույն գրքից:

Տե՛ս, շատերը չեղած գարուց
Բերք են վերցնում մեկին հազար,
Իսկ քո ոսկի ցորենից էլ՝ մեկ էլ տեսար՝
Փո՞ւշ կբուսնի,-ի՞նչ իմանաս:

Կամ՝

Նա ուրիշի շյուղն է տեսնում՝
Մոռանալով իր գերանը. /262/

Ետպատերազմյան հայ պոեզիան ավելի բարձր զարգացման հասավ 50-ական թվականների վերջերից սկսած, հասարակական-քաղաքական «ձնհալի» տարիներին: Բյուրոկրատիզմի, հոգևոր ու բարոյական արժեքների անկման սոցիալական անարդարությունների դեմ անզիջում պայքարի և այդ տրամադրությունների բովում թրծված իր գեղագիտական հավատամքի կայունությամբ է Սևակը ստեղծում իր «Ոիթնյակներ» շարքը՝ խորապես ընդգծելով հասարակական տրամադրությունների ուղղվածությունը, այսպիսով, իր քաղաքացիական նկարագրին հաղորդելով նաև ժամանակի շունչն ու ոգին:

Ետչարենցյան սերունդը՝ Հ. Սահյանի, Ս. Կապուտիկյանի, Մ. Մարգարյանի, Գ. Էմինի, Վ. Դավթյանի, Հր. Հովաննիսյանի գլխավորությամբ, կարողացավ հաղթահարել բազմաթիվ հակասություններով ու բարդություններով լեցուն այդ ժամանակահատվածը՝ հավատարիմ մնալով ազգային ոգուն ու գաղափարաբանությանը:

Նրանց նվագներից զգացվում էին ազգային-ժողովրդական ոգու, բնավորության, գծերի ու գույների, մայրական սիրո, կարոտի ու երազի, Հայաստանին և հայ ժողովրդին նվիրված բանաստեղծական ընդհանրացումները, այդ ոգու համն ու հոտը:

Պ.Սևակի պոեզիան առավելապես աչքի էր ընկնում ճիշտ շեշտադրության, փիլիսոփայական խոհի, մետաֆորային մտածողության ու գեղագիտական հստակ զուգորդությունների համաձուլվածքով:

Օգտվելով բանահյուսության բազմադարյան շտեմարանի հարուստ պաշարից՝ Սևակը երբեմն դիմել է նաև ժողովրդական ասացվածքներին՝ «Շատի ետևից ընկնողը, քիչն էլ ծեռքից բաց կթողնի», «Մի ծեռքով երկու ծմերուկ չես բռնի», և բանաստեղծականացրել դրանք:

Աններդաշնակ իրականության պայմաններում էր ապրում բանաստեղծը՝ «դանդա՛ղ, աննկա՛տ» ուռչող, բայց հանկարծակի պայթող «վտանգից», «դանդա՛ղ, աննկա՛տ» մետաղից ծնվող և այդ նույն մետաղը կրծոտող ժամանակի «ժանգից» պետք էր ապահովագրվել, քանի դեռ չի հնչել տագնապի այն սուր ահազանգը, որ չի թողնի արդեն կազմել դեռևս գոյություն չունեցող ժողովածուի ցանկը.

Հանկարծակի է պայթում վտանգը,
Բայց նա ուռչում է դանդա՛ղ, աննկա՛տ,
Դանդա՞ղ, աննկա՞տ՝ մետաղից ծնվում
Ու նույն մետաղն է կործտում ժանգը: /261/

Կարծես թե մաթեմատիկական պարզ օրենք է՝ «գումարելիների տեղափոխությունից, գումարը չի փոխվում», սակայն այս օրենքի շնորհիվ է, որ բազում բարդ խնդիրներ և անհայտներով հավասարումներ են լուծվում: Այդպես էլ՝ «հարյուրը՝ հարյուր, հազարն էլ հազար է մնում» և որքան կուզես «փոշտա», քանի որ «փռշտալու», «մրսելու» և «հազալու» միջև եղած տարբերությունը պատմականորեն ապացուցված երևույթ է, և որքան կուզեն , թող «բարձր սաղարթներից» ու «մայիսյան վարդերից» խոսեն, միևնույն է՝

Սխար ի՞նչ օգուտ-աշունը՝ աշուն,
Խազալն էլ խազալ է մնում:/258/

Ժամանակի պարտադրած թեմաների ու տրամադրությունների այս ներհակ հանգուցակետերում էլ սրվում են կյանքի հակասականության մեջ փիլիսոփայական խոհի, մտահղացումների և դրանց յուրօրինակ կատարումների սևակյան դրսևորումները, որոնք հայ պոեզիայի հազվագյուտ նմուշներ են: Մարդը, որպես բանական էակ, բնության մեջ գտնվող ամեն մի երևույթից՝ «անշունչ ցողունից» ու «մեղվից» վե՛ր է իր գիտակցությամբ ու ապրումներով: Անհատականացնելով մարդուն՝ Սևակը բացահայտում է նաև նրա գնահատման բարոյական բարձր սկզբունքները.

Դու, որ մարդ ես՝ ոչ մեղու
Ոչ էլ ցողում մի անշունչ,
Ամեն «սխալ » մի՛ ծաղկիր,
Ամեն «սխալ» մի՛ շտկիր: /259/

Ջահել ու անփորձ երիտասարդի ամբարտավանության հասնող ինքնավստահությունն ու խանդավառությունն է բացահայտում 18-րդ ութնյակում: Երիտասարդին «բլրաշատ» կյանքը դեռ «հարթավայր» է թվում, քանի դեռ նա չի ճաշակել կյանքի մատուցած անակնկալ խոչընդոտներն ու սահանքները, չի անցել ոլորապտույտ ճանապարհներով. և չգիտի, որ՝ «ծավարը ցորենն է, որ ծիլ չի տալիս»: /226/ Հոգևոր ու բարոյական արժեքների կորուստներն իրենց վառ արտահայտությունն են գտել հաջորդ ութնյակներում:

Շատ թեթև զանցանքի դիմաց
Շատ ծանր հանցանք են գործում : /260/

Շարքի տասնհինգ ութնյակներն էլ իրար կապված են գաղափարական-բովանդակային հանգույցով. Դրանք ինքնատիպ առանձին բանաձևեր են, թևավոր խոսքեր, աֆորիզմներ, որոնք արտացոլում են ժամանակի մահառիթ հևքը: Փիլիսոփայական խոր հենք ունի վերջին ութնյակը. անհատի հոգեկերտվածքի ձևավորման մեջ մեծ դեր է խաղում տարիքը, և ամեն նոր բացվող

օր աստիճանաբար փոխում է նաև մարդու աշխարհայացքը, ուրիշ է թվում թե՛ «առնելիքը», և թե՛ «տալիքը».

Խստադեմ գալիքն է նայում.
Մեզանից ի՞նչ պիտի մնա,
Երբ անցնի օրվա հետ մեկտեղ
Օրերի փրփուր ալիքը: /267/

Կյանքը կարճ է՝ «օրերի փրփուր ալիքն» անցնում է, իսկ գալիքը 1956-ին դեռևս ավելի քան խստադեմ էր: Օրերի այդ խառնաշփոթ հոլովույթների և իրարամերժ, հակասական իրադրությունների հյուսվածքում՝ Պ.Սևակը հանգում է փիլիսոփայական խոր ընդհանրացման.

Թե դատարկ է
Անցյալդ
Ի՞նչ իմանաս՝
Հուշն ինչ է: /261/

Պ. Սևակի պոեզիան դեռևս չընթերցված շատ էջեր ունի ու չասվածն ու չբացահայտվածը ասվածից ու բացահայտվածից ավելի շատ է, և որքան խորն են նրա տաղանդի արմատները, այնքան ընդերքն ավելի հարուստ ու բազմաշերտ է: